



Ավետիք Իսահակյան

Մաքսիմ Ռիլսկուն, 1931թ . , օգոստոսի 2, Կիսլովոդսկ

Իմ թանկագի՛ն Մաքսիմ Ֆադեևիչ.

Մեծ ուրախությամբ ստացա ձեր խմբագրությամբ լույս տեսած իմ բանաստեղծությունների հատրնտիր ժողովածուն: Ես շատ երջանիկ եմ, որ Դուք այդքան ջանք ու եռանդ եք ներդրել, որպեսզի ուկրաինացի ընթերցողին ծանոթացնեք իմ պոեզիային:

Ներեցեք ինձ, որ այսքան ուշացումով եմ պատասխանում. մեկ ամսից ավելի հիվանդ էի: Բայց այդ, ես շատ էի ուզում, որ ինձ կարդային ժողովածուն /իսկ դրա համար անհրաժեշտ էր գտնել մեկին, որը տիրապետեր ուկրաիներեն լեզվին/ և օգնեին ինձ Ձեզ նամակ գրելու Ձեր մայրենի լեզվով: Եվ այժմ ես համոզվեցի, որ Դուք, Ձեր և իմ ընկերների բանաստեղծությունները թարգմանել եք ճիշտ, լավ, կարողացել եք իմ խոհերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ թանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել գեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով, անմոռաց, սրտալի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր: Մեծ երջանկություն է ինձ համա, որ ուկրաինացի հերոսական և բանաստեղծական ժողովուրդը կկարդա իմ բանաստեղծությունները և, ուզում եմ հուսալ, որ կսիրի դրանք: Իմ անկեղծ շնորհակալությունը Ձեզ, թանկագին Մաքսիմ Ֆադեևիչ, շնորհակալություն թանկագին Պավել Գրիգորևիչին, ինչպես նաև Վ. Սոսյուրային, Լ. Պերվոմայսկուն, Օ. Նովիցկուն և բոլոր նրանց, ովքեր թարգմանել են իմ բանաստեղծությունները:

Ձերնորեն, ամբողջ սրտով ողջունում եմ Ձեզ, ցանկանում եմ երկար կյանք, առողջություն և ուժ, նոր հաջողություններ աշխատանքում:

Ձեր՝ Ա. Իսահակյան